Տ-Բ-Ռ Եայլաղ կոչեցեալ, յորում ասէին. մեք 'ի հարց և 'ի նախնեաց մերոց գոլով հպատակ Օսմանեան Տէրութեան, զամենայն հարկս նորին անթերի հատուցանեմք մինչեւ ցայսօր. իսկ այժմ Մարտիրոս անուն վարդապետ ոմն հպատակ Պարսից և հետեւող Հայոց, յընթացս քանի ամաց վարեաց զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի. զամենայն կալուածս և զստացուածս՝ թէ 'ի քաղաքի անդ և թէ յայլ գաւառս Կայսերութեան, վատնեաց 'ի կամս իւր և կորոյս եւ յիւրաքանչիւր ամի ժողովեալ զյոլով դրամս յաղգէն Հայոց, առաքէ 'ի Պարսկաստան ընդ Ջուղայեցի Հայս հպատակ Պարսից, եւ արար զմեծ վնասս վանաց՝ եւ հասոյց զրկանս աղքատաց։ Իսկ այժմ զոր ընտրեցաք՝ զայն կացուսջիք Պատրիարք Երուսաղէմի, եւ զՄարտիրոսն զայն եւ զայլ Պարսկահայս 'ի բաց հանեալ արտաքսեսջիք 'ի միջոյ մերմէ։ Եհաս անդր և Եղիազար և նա եւս մատոյց գիր աղաչանաց, և վերստին հաստատեցաւ 'ի Պատրիարքութեան Երուսաղէմի, 'ի ՀԱ ճեմազիլ էվվէլ ամսոյ՝ ՌՃՀԲ (1671)։ Էառ նաեւ Եղիազար հրովարտակ վասն Նուիրակաց Էջմիածնի, չ'հրջիլ 'ի գաւառս Օսմանեան Պետութեան։

Եւ զի ոչ կամէր Եղիազար գալ Յակոբայ Կաթուղիկոսի եւ հրջիլ 'ի Տէրութեան Օսմանցւոց և գնալ 'ի Կոստանդինուպոլիս, քաջ գիտելով՝ թէ այնու ոչ պակասին վէճք և հակառակութիւնք 'ի մէջ ժողովրդոց՝ յոչ խաղաղութիւն ինքեան, նմին իրի նախ ազդ արար առ կուսակալն Դամասկոսի Ահմէտ Փաշա, և ետ գրել նմա 'ի Դուռն վասն այնր, և ապա ինքն բողոք կալաւ առ Եպարքոսն. զի մեկնեալ Յակոբայ 'ի Տէրութենէ Օսմանցւոց երթիցէ 'ի վանս իւր։ Գրեցաւ հրովարտակ առ ամենայն դատաւորս և գործավարս քաղաքաց և գաւառաց, Զմիւռնիայ, Նիկոմիդեայ, մինչեւ 'ի սահմանս Վանայ, զի ուր և ընդ ում իշխանութեամբ գտցի Յակոբ Կաթուղիկոս, մի տացեն թոյլ գալ 'ի Կոստանդինուպոլիս, այլ առանց յապաղելոյ մի օր և մի ժամ, որոշեալ ոստիկանաւ ընդ արս հաւատարիմս, հսկելով և պահպանելով զսայդ և զդերեկն, զի մի և փոքր վնաս ինչ պատահեսցի անձին նորա, փութանակի հասուցեն զայն 'ի Վան քաղաք. 'ի ՌՃիլգատէ